17
ՀՈԿՏԵՄԲԵՐ
2025

Luys Lnyu®

ԱՐԱՐԱ՛Տ, ԹԷ ԱՐԱԳԱԾ

ԱՐԱՐԱ՞Տ, ԹԵ՞ ԱՐԱԳԱԾ

«Այս դիմակի տակ միս ու արյունից ավելին կա:
Այս դիմակի տակ գաղափար է, պարո՛ն Քրիդի:
Իսկ գաղափարները «զրահապատ» են»:

«ՎԵՎ նշանակում է Վենդետա» ֆիլմից (2005թ.)

Այսօր, երբ խոսում ենք ազգային ինքնության մասին, հաճախ կենտրոնանում ենք լեզվի, կրոնի կամ պատմության վրա: Սակայն այս ամբողջ համակարգը դառնում է կենսունակ և արդյունավետ միայն այն ժամանակ, երբ ներմուծվում է խորհրդանիշների համակարգ: Սիմվոլները, խորհրդանիշները (դրոշներ, հուշարձաններ, ազգային առասպելներ, թանգարանային պատկերներ և այլն) ոչ միայն արտահայտում են ազգի ինքնությունը, այլև **մարմնավորում այն**, դարձնում շոշափելի, փոխանցելի և կարևորագույնը՝ պաշտպանելի:

Խորհրդանիշները՝ որպես ազգային ինքնության հիմք

Խորհրդանիշները, սակայն, երբեք պարզապես պատկերներ չեն եղել: Դրանք հաղորդակցման գործիքներ են՝ կրողը ազգային գաղափարախոսության և հոգեբանության, դրանք կերտում են կոլեկտիվ հիշողություն՝ միաժամանակ արտացոլելով անցյալն ու կառուցելով ապագայի տեսլականը: Ազգային ինքնությունը «պատկերավոր համայնք է», որտեղ խորհրդանիշները ծառայում են որպես այդ համայնքի ֆիզիկական և հոգևոր ամրացման միջոց:

Պետությունները՝ ինչպես ժողովրդավարական, այնպես էլ ավտորիտար, գիտակցաբար ձևավորում և վերահսկում են խորհրդանիշների մեկնաբանումը՝ հենվելով հանրային կրթության, զանգվածային լրատվության և մշակութային ինստիտուտների վրա: Պատմության ընթացքում խորհրդանիշներն օգտագործվել են հասարակությունների համախմբման, դիմադրության և ինքնության ամրապնդման համար: Օրինակ՝ Ֆրանսիական հեղափոխության ժամանակ եռագույն դրոշը ոչ միայն հանդես է եկել որպես ազատության խորհրդանիշ, այլև ձևավորել է ֆրանսիացիների նոր ազգային ինքնությունը: Հունաստանի դեպքում Ակրոպոլիսը ոչ միայն հինավուրց քաղաքակրթության խորհրդանիշ է, այլև այն օգտագործվել է 19-րդ դարի ազգային վերածննդի ժամանակ՝ որպես ազգային

հպարտության հենակետ: ԱՄՆ-ում Ազատության արձանը դարձել է երկրի ժողովրդավարական արժեքների և գլոբալ ազդեցության խորհրդանիշը, որն աշխարհին փոխանցում է ազատության և հնարավորությունների ուղերձ: Այսօր նմանատիպ օրինակներ կարելի է գտնել նաև Ճապոնիայում, որտեղ մշակութային խորհրդանիշները, ինչպիսին են, օրինակ, սակուրան կամ սամուրայների կերպարները, օգտագործվում են երկրի ավանդույթների և ժամանակակից նորարարությունների համադրությունը ցույց տալու համար:

Որպեսզի խորհրդանիշները կենսունակ դառնան, դրանք պետք է ներառվեն առօրյա կյանքի ինստիտուցիոնալ ցանցի մեջ: Ընտանիք, դպրոց, թանգարան, բանակ, եկեղեցի՝ բոլորն էլ վայրեր են, որտեղ խորհրդանիշները **վերարտադրվում են, դասավանդվում և փորձառվում**:

Անգամ ընտանեկան ալբոմը՝ մարաշյան նախշերով կամ պապի մեդալով, մանուկի համար դառնում է ազգային հպարտության ուղեցույց: Այս համատեքստում արժեքավոր է Կոռնելիուս Կաստորիադիսի տեսությունը[1]՝ ըստ որի՝ ինստիտուտները ոչ միայն կանոնակարգում են կյանքը, այլ ստեղծում են **նոր իրականություն՝ երևակայականի հիման վրա**:

Պետությունները դարեր շարունակ կիրառել են զորք և բռնություն՝ իրենց նպատակներին հասնելու համար: Սակայն 21-րդ դարում առավել խելամիտ գործիք է դարձել **փափուկ ուժը**՝ մշակույթի, կրթության, տեղեկատվության միջոցով ազդելու կարողությունը: Խորհրդանիշները՝ որպես մշակութային կոդ, այս «փափուկ» համակարգի հիմնական տարրերն են: Օրինակ՝ ԱՄՆ-ն իր սերիալներով, հոլիվուդյան պատկերներով, դիսնեյյան սիմվոլներով ոչ միայն ներկայացնում է սեփական մշակույթը, այլ նաև **սպառման ու ազատության կենսաձևը**, որը ներմուծվում է այլ հասարակությունների մեջ, այդ թվում՝ հետխորհրդային տարածք: Նմանատիպ օրինակ է Հարավային Կորեան՝ իրենց K-Pop երաժշտությամբ, որն ամբողջ աշխարհով գրավում է երիտասարդների լայն զանգվածների և այդպիսով դրական պատկեր ձևավորում տվյալ երկրի մասին:

21-րդ դարում ինքնության ձևավորումը տեղի է ունենում ոչ թե մեկ փակ տարածքում, այլ գլոբալ ասպարեզում: Այստեղ ազգային սիմվոլները հայտնվում են համընդհանուր, հաճախ նաև՝ կեղծ համամարդկային արժեքների ազդեցության տակ: Սա այն է, ինչ վերլուծաբանը կոչում է **կոսմոպոլիտ ինքնության ներխուժում**:

[1] "*The Imaginary Institution of Society", Cornelius Castoriadis, 1975, Seuil*

Պետք է տարբերակել երկու կոսմոպոլիտիզմ՝

- **գլոբալ ժողովրդավարական**, որը հիմնված է մարդու իրավունքների, միջազգային իրավունքի և հանդուրժողականության վրա,
- **նեոիմպերիալ**, որտեղ գլոբալ դերակատարները փորձում են «քաղաքակրթել» մյուսներին՝ իրականում պաշտպանելով սեփական գերիշխան շահերը:

Խորհրդանիշների պարտադրումը կամ վերածևումն առանց տեղական մշակութային հիմքի հաճախ հանգեցնում է ինքնության ճգնաժամի: 1990-ականներին նորանկախ պետություններում Արևմուտքից ներմուծված արժեքներն ու սիմվոլները բախվում էին տեղական պատմության, ավանդույթի, կրոնի և էթնիկ կառուցվածքի հետ: Պատկերավոր ասած՝ փորձ էր արվում ներմուծել շերտավորված ինքնություն մի դաշտ, որտեղ անգամ հիմքն ամբողջությամբ ձևավորված չէր: Հետևանքը եղավ անջատողականությունը, ապակենտրոնացումը, անհավասարակշիռ հանրային պատկերի ձևավորումը:

Հանրային սիմվոլները նաև **պաշտպանության միջոց են**: Երբ պետությունները կարողանում են սիմվոլների միջոցով ձևավորել ազգային պատկանելություն, պատվում են անցյալի հզորությունը և միաժամանակ կառուցում ապագայի մղումը, նրանք դառնում են կենսունակ: Իսրայելի դեպքում նման օրինակ է «Դավթի աստղը», որը ոչ միայն հիշեցնում է անցյալի դարավոր պատմությունն ու պայքարը, այլև մոբիլիզացնում ժողովրդին՝ պահպանելու և զարգացնելու պետությունը:

Խորհրդանիշները Հայաստանում և դրանց դերը

Ինքնությունը սկսվում է հողից: Հատկապես փոքր ազգերի և տարածաշրջանային համայնքների համար էթնիկ ինքնության հիմքում դրված են որոշակի աշխարհագրական և մշակութային նշաններ՝ լեռներ, գետեր, ավանդական բնակավայրեր, եկեղեցիներ, մշակութային կոթողներ: Նման տարրերը կրում են բարձր հուզական լիցք, ինչի շնորհիվ՝ նաև մոբիլիզացնող ներուժ:

Հայաստանի պարագայում Արարատ լեռը, լինելով հայ ժողովրդի պատմության, մշակույթի ու հավատքի խորհրդանիշ, համարվում է հայկական ինքնության առանցքային կետ: Արարատը միայն աշխարհագրական բարձրունք չէ, այլ նաև քաղաքական և հոգևոր խորհրդանիշ, որն իբրև ազգային իդեալ ու հույս ծառայում է ժողովրդի համախմբմանը, ինքնապահպանմանը և հետագա զարգացմանը: Նրա պատկերն ու առկայությունը մշտապես կենդանի է հայերի

գիտակցության մեջ՝ անկախ ժամանակից ու հեռավորությունից՝ որպես հայության հավերժական վերադարձի ու անսասանության նշան:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը Հայոց ցեղասպանության ողբերգության խորհրդանիշն է, որը ոչ միայն հիշեցնում է անցյալի ցավալի իրադարձությունները, այլև նպաստում ազգային դիմադրության և արդարության մղմանը: Ծիծեռնակաբերդը, որպես սգո և հարգանքի վայր, միաժամանակ դարձել է նաև համազգային համախմբման և դիմադրության հարթակ, որտեղ ներառվում է հայ ժողովրդի ընդհանուր պատմական ցավը, հիշողությունը և ապագայի նկատմամբ պատասխանատվությունը:

Արցախի հետ փոխկապակցված սիմվոլները, ինչպիսին Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է կամ Ստեփանակերտի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանը, կարևոր դեր են խաղացել ռազմական և քաղաքական փորձությունների ընթացքում: Այս խորհրդանիշները դարձել են ոչ միայն պատմական և մշակութային արժեքներ, այլև հոգևոր դիմադրության և ազգային միասնության վկայակոչում: Նրանք հանդիսանում են հոգեբանական և բարոյական աջակցության աղբյուր՝ հատկապես ճգնաժամային ու ծանր ժամանակներում, երբ հասարակությունը կանգնած է գոյաբանական մարտահրավերների առջև: Հասարակության լայն շերտերի կողմից ընդունված և սիրված այս սիմվոլները ծառայում են որպես միասնության և ուժի աղբյուր, որպես այն հիմնասյուները, որոնց վրա կերտվում են հանրային համախմբումը և դիմադրության ոգին:

Այս և շատ այլ խորհրդանիշների միջոցով փոխանցվում է պատմական գիտակցությունը, պահպանվում է ավանդույթների շարունակականությունը և ամրապնդվում է ազգային ինքնության մեջ միասնականության զգացումը: Նրանք հանդիսանում են կարևոր գործիքներ, որոնք ոչ միայն պահպանում են անցյալի հիշողությունը, այլև տրամադրում են արժեքներ ու իմաստներ, որոնք օգնում են հայ ժողովրդին դիմագրավելու ներկայիս մարտահրավերներին և կառուցելու արժանապատիվ ու վստահ ապագա:

Վտանգները խորհրդանիշների ուրացման պարագայում

Հայաստանի համար ազգային խորհրդանիշների մոռացությունը կամ անտեսումը կարող է հանգեցնել ինքնության խաթարմանը, քանի որ վերջիններս ոչ միայն կրում են ազգային հիշողությունը, այլև ծառայում են որպես սերունդների միջև կապող օղակ: Դրանց ուրացումը կարող է խաթարել կոլեկտիվ հիշողությունը և հանգեցնել հասարակական ապակենտրոնացման:

Այդ է պատճառը, որ 21-րդ դարում խորհրդանիշներն ունեն առանցքային դեր տեղեկատվական պատերազմներում: Օրինակ, Ադրբեջանը տասնամյակներ շարունակ վարում է համակարգված քաղաքականություն, որը նպատակ ունի ջնջել հայկական մշակութային և պատմական ներկայությունը՝ հատկապես Արցախում և շրջակա տարածքներում: Այս քաղաքականությունն ուղղված է ոչ միայն ֆիզիկական մշակութային հուշարձանների ոչնչացմանը, այլև հայկական խորհրդանիշների պատմական և մշակութային նշանակության վերացմանը: Հայկական խորհրդանիշները հաճախ հանդես են գալիս որպես հայ ազգի համախմբման գործիքներ, որոնք ոչ միայն հիշեցնում են անցյալի վեհությունը, այլև մոբիլիզացնում են հանրային գիտակցությունը ներկայի մարտահրավերների դեմ: Ադրբեջանը, քաջ գիտակցելով սա, փորձում է ոչ միայն ֆիզիկապես ոչնչացնել այդ խորհրդանիշները, այլև զրկել դրանք իրենց պատմական և մշակութային համատեքստից: Այս քաղաքականությունը ներառում է նաև հայկական մշակութային ժառանգության յուրացումը և ադրբեջանականացնելու փորձերը: Օրինակ՝ հայկական եկեղեցիների գմբեթների և արձանագրությունների վերափոխումը, դրանց ներկայացումը որպես աղվանական ժառանգություն:

Նման մարտահրավերների առկայության պարագայում հատկապես վտանգավոր է, երբ պետական ինստիտուտները չեն գործադրում ջանքեր՝ խորհրդանիշների արդիականացման ուղղությամբ: Այսօր, ցավոք, ակնհայտ է, որ Հայաստանի պետական քաղաքականությունը ոչ միայն չի նպաստում ազգային խորհրդանիշների արդիականացմանն ու պահպանմանը, այլև հաճախ գործում է դրանք «վերացնելու» ուղղությամբ՝ արհեստականորեն մոռացության մատնելով այնպիսի խորհրդանիշներ, որոնք կարող էին համախմբել ազգը:

Այս համատեքստում հատկապես վտանգավոր են «Արարա՞տ, թե՞ Արագած» նմանօրինակ հասարակական-քաղաքական կեղծ խոսույթները, որոնք նպաստում են հասարակության բևեռացմանը: Խորհրդանիշների շուրջ առաջացած հակասությունները հաճախ օգտագործվում են ոչ թե համախմբման, այլ բաժանարար գծեր ստեղծելու նպատակով: Դա խոչընդոտում է ազգային համախմբմանը՝ թուլացնելով պետական ինստիտուտների և հասարակության միջև կապը: Հատկապես զգալի է դա քաղաքական դաշտում, որտեղ ազգային խորհրդանիշների մանիպուլյացիան օգտագործվում է կարճաժամկետ շահերի համար՝ առանց հաշվի առնելու դրա երկարաժամկետ հետևանքները: Օրինակ՝ եթե Արարատը ընկալվում է___որպես բացառապես «պահպանողական» գաղափարական արժեք, իսկ Արագածը՝ «առաջադեմ» կամ «նորարար», հասարակության տարբեր հատվածներ սկսում են իրենց նույնացնել մեկ խորհրդանիշի հետ՝ մերժելով մյուսը: Սա խոչընդոտում է ընդհանուր ազգային ինքնության ձևավորմանը՝ ստեղծելով բազմաբևեռ և հակամարտող

ինքնությունների դաշտ: Արդյունքում՝ փոխանակ խորհրդանիշները դառնան ազգի միասնականության հիմքը, դրանք դառնում են տարաձայնությունների առիթ: Բացի այդ, պառակտված հասարակությունն ավելի խոցելի է արտաքին ճնշումների և ճգնաժամերի ժամանակ, ինչը կարող է հանգեցնել ինքնիշխանության թուլացման: Կեղծ խոսույթի միջոցով իրական խնդրահարույց հարցերը՝ անվտանգություն, ինքնության պահպանություն, մշակույթի զարգացում, թիրախավորվում են կամ փոխարինվում մակերեսային հակադրություններով, որոնք անհամապատասխանորեն անդրադառնում են ազգային շահերին:

Մինչդեռ Հայաստանի պարագայում, եթե պետական ու տեղական ինստիտուտները հետևողականորեն աշխատեն ազգային խորհրդանիշների հետ՝ ժամանակակից մեկնաբանություններով, ապա հնարավոր կլինի ձևավորել **սոցիալական համախմբում**, որը կդիմակայի ինչպես արտաքին ազդեցություններին, այնպես էլ ներքին ապակառուցողական ճնշումներին:

Ազգային խորհրդանիշների համախմբման և արդիականացման համար անհրաժեշտ է մշակել հետևողական և միասնական քաղաքականություն, որը կմիավորի պետական, համայնքային և մասնավոր հատվածների ջանքերը: Սա ենթադրում է, որ.

- Ազգային խորհրդանիշները պետք է դուրս մղվեն քաղաքական դաշտից և պահպանվեն որպես ընդհանուր մշակութային ժառանգություն: Պետական ինստիտուտները պետք է ապահովեն, որ խորհրդանիշները չդառնան ներքաղաքական պայքարի գործիք:
- Պետությունը և հասարակական կազմակերպությունները պետք է աշխատեն ազգային խորհրդանիշները վերաիմաստավորելու ուղղությամբ՝ ոչ թե մեկը մյուսով փոխարինելու միջոցով, այլ դրանք ներկայացնելով որպես միասնականության և ընդհանուր ապագայի խորհրդանիշներ: Օրինակ՝ Արարատն ու Արագածը կարող են համատեղ ներկայացվել՝ որպես Հայաստանի «երկու գագաթներ», որոնք լրացնում են միմյանց:

- Հանրային կրթության համակարգը պետք է ակտիվորեն ընդգրկի խորհրդանիշների պատմությունը, դրանց մշակութային արժեքը և նշանակությունը: Սա կօգնի նոր սերունդներին հասկանալ, որ խորհրդանիշները ոչ թե տարանջատող, այլ համախմբող գործիքներ են:

Այս ջանքերի իրականացման դեպքում հնարավոր կլինի ձևավորել հասարակություն, որը ոչ միայն կպահպանի իր ինքնությունը, այլև կդիմակայի գլոբալացման, արտաքին ճնշումների և ներքին ապակառուցողական ազդեցությունների մարտահրավերներին:

Ամփոփում

Հայաստանի ազգային խորհրդանիշների վերաիմաստավորումը և դրանց շուրջ հասարակական համախմբումը ոչ միայն անհրաժեշտ են երկրի ազգային ինքնության պահպանման համար, այլև պարտադիր՝ դրա կենսունակությունը երաշխավորելու նպատակով: Սակայն այսօր գործող քաղաքականության տրամագծորեն հակառակ մոտեցումը վտանգում է այդ գործընթացը՝ նվազեցնելով ազգային ինքնության ներուժը և խոչընդոտելով նրա ամրապնդումը: «Արարա՞տ, թե՞ Արագած» կեղծ խոսույթների հաղթահարումը, ազգային արժեքների արդիականացումն ու դրանք ժամանակակից խնդիրների լուծման միջոց դարձնելը պետք է դառնան պետական առաջնահերթություն՝ ապագա սերունդների համար կայուն և ուժեղ ազգային ինքնություն ստեղծելու նպատակով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: